

## ՏԱՐԱՆՁԱՏՎՈՂ ՀԻՄՆԱՍՅՈՒՆԵՐ

Անցած երկու տասնամյակներում Հայաստանից սկիզբ առած **արտագաղթի** հզոր ալիքը սկսել է լրջորեն վտանգել նոր և նորագույն ժամանակների մեր ազգային քաղաքականության հիմնասյուները՝ **հողահավաքի** ու **ազգահավաքի** առաջադրանքները, որոնք հայրենիքից հեռացող յուրաքանչյուր հայի հետ միասին՝ դանդաղորեն տարանջատվում են իրարից:

Անկախ Հայաստանը, որը եղել է բազում սերունդների երազանքը, ներկայումս դարձել է ոչ թե ազգահավաքի, այլ ազգասփռումի հիմնական ազդակը: Արտասահման տեղափոխվելու և այնտեղ հաստատվելու հիմնավոր ու անհիմն պատճառների և անգամ պատրվակների փնտրտուքը սկսել է վերածվել յուրահատուկ հայաստանյան համախտանիշի: Իսկ օտար երկրներում հաստատված մեր հայրենակիցներից շատերը պատրաստ են դիմելու ցանկացած հնարքի, միայն թե ապացուցեն, որ սեփական հայրենիքում իրենց հալածել են քաղաքական, կրոնական, տնտեսական և այլ դրդապատճառներով:

Եթե տեղի ունեցող ողբերգությունը դիտարկենք ժամանակային ավելի լայն «պատուհանի» միջով, ապա կարող ենք եզրակացնել, որ բացի մայրաքաղաք Երևանից ու Արարատյան դաշտավայրի մի շարք շրջաններից, Հայաստանը դանդաղորեն հայաթափվում և ուժասպառվում է: Բայց ամենավտանգավորն այն է, որ հարազատ երկրում մնացողների մոտ հայրենիքի գաղափարը՝ «Մի կուռք, որի առջեւ անյիշատակ ժամանակներից ի վեր սերունդները գլուխ են խոնարհեցրել ճշմարիտ կրօնական երկիրաձուլթեամբ»<sup>1</sup>, սկսել է աստիճանաբար, բայց հետևողականորեն իր տեղը զիջել օտարման բարդությին:

Ուստի, երբ Մեծ եղեռնի 95-ամյակի հետ կապված՝ հայրենի ցեղասպանագետները փորձում են հիմնավորել այդ հանցագործության համար Թուրքիայի պատասխանատվության հարցը և գտնել հայոց հայրենագրկված հետևանքների հաղթահարման ուղիները, ժողովրդագրության մասնագետներն անմիջապես առաջադրում են հետևյալ հակափաստարկը. մեր երկրի անկախության վերականգնումից հետո անցած տարիներին Հայաստանը լքել են ճիշտ նույնքան՝ 1.5 միլիոն հայեր, որքան կոտորվել են 20-րդ դարի սկզբներին՝ Հայոց ցեղասպանության արդյունքում<sup>2</sup>:

Խոստովանենք, որ գիտնականների այս երկու խմբերի ախտաճանաչումները հավասարապես ճշգրիտ են՝ յուրաքանչյուրն իր ոլորտի համար: Երբ դատարկվում է ճակատագրով մեզ բաժին ընկած փոքրիկ երկիրը, հաղթանակները, որոնց հիման վրա ժամանակին ձևավորվել են Հայաստանի Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, վերածվում են ծանրագույն պարտությունների՝ հայրենատիրության ասպարեզում:

1 Միքայել Վարանդեան, Հայրենիքի գաղափարը, Պէյրուս, 1985, էջ 19:

2 Ավելի մանրամասն տես «Վեն»-ի ներկա համարում հրապարակվող Արսեն Լ. Պետրոսյանի ուսումնասիրությունը:

Բ (Ը) դարձ, քիվ 2(30) ամբի-հունիս 2010

ՎԵՄ համահայկական հանդես

Անգամ 21-րդ դարի սկզբներին՝ Հայաստանի տնտեսության աշխուժացման պայմաններում շարունակվող և մեր երկիրը արյունաքամ անող արտագաղթի արմատները թաքնված են.

ա) Հայոց պատմությանը բնորոշ որոշակի օրինաչափությունների կրկնությամբ, բ) Հայաստանի Հանրապետության զարգացման գործընթացում առկա ձևախեղումների շարունակականության, գ) համաշխարհայնացման արդյունք՝ քաղաքակրթական ձգողականության օջախների ձևավորման գործընթացի հետնախորքում:

Սակայն, չմոռանանք, որ այս առարկայական պատճառները, ի վերջո, արտագաղթի մասին որոշման են վերածվում անհատական, լավագույն դեպքում՝ ընտանեկան-բարեկամական մակարդակների վրա, ուստի անհնար է հասկանալ մասն քայլի իմաստը՝ հայ մարդու գործողությունների խորքային շարժառիթներից դուրս: Եվ շարունակվող արտագաղթի գիտականորեն հիմնավորված ախտաճանաչումները հնարավոր են միայն **մարդակենտրոն** աշխարհընկալման շրջանակներում:

Ժամանակին դեռևս Կանտոն է արձանագրել, որ ցանկացած գործընթաց կորցնում է իր իմաստը, եթե կտրվում է մարդ անհատից, որը ոչ միայն միջոց է, այլև նպատակ: Մեր պարագայում մարդու պրոբլեմի շարունակական անտեսումը հանգեցնում է առաջադիմության տնտեսաքաղաքական ու ժողովրդագրական չափորոշիչների տարանջատմանը:

Մեզանում այս երևույթն ունի նաև իր **պատմական խոր արմատները**: Սեփական նպատակները պետության քաղաքական օրակարգից տարանջատելու գործելակերպը Հայոց պետականության կործանումից հետո՝ շուրջ մեկ հազարամյակ, եղել է անհատների բարդ խճանկարի տրոհված հայ հանրության յուրահատուկ «ինքնապաշտպանական զենքը»: Դարեր շարունակ մեր ժողովրդի քաղաքակրթական ներուժը խտացել է հոգևոր հայրենիքի գաղափարով առաջնորդվող հայ անհատների մեջ, որոնց խճանկարը գոյատևել է որպես Հայաստանյայց եկեղեցու շուրջը համախմբված կրոնական համայնք: Այդ անհատների մեծ մասը որոշակի արարողությունների ժամանակ է միայն վերհիշել հայրենիք ունենալու փաստը, իսկ մնացած ժամանակամիջոցում առաջնորդվել է անհատական բարեկեցության տեսլականով:

Վերջին երկու դարերի ընթացքում, ազգային-ազատագրական պայքարի վերելքի հետ միասին, այս ասպարեզում որոշակի դրական տեղաշարժեր արձանագրվեցին: Ձեռնարկվեց հայ անհատի դրական ներուժը՝ **անհատականությունը** հայրենիքի ազատագրությանը ծառայեցնելու և նրանից «...պետութիւն եւ պատմութիւն կերտող մի ազգ»<sup>3</sup> ձուլելու հերոսական փորձը՝ ի դեմս ՀՀ Դաշնակցության քաղաքական պայքարի և նրա արդյունք՝ Հայաստանի առաջին Հանրապետության: Այս առաքելությունը, սակայն, երկար ժամանակով ընդհատվեց Հայաստանի խորհրդայնացումից և միջնադարում ու նոր ժամանակներում ազգի հավաքական նպատակները մարմնավորող Եկեղեցու և ՀՀ Դաշնակցության մեկուսացումից հետո:

Անշուշտ, խորհրդահայ իրականության մեջ ևս ձեռնարկվեց հայի անհատականությունը որոշակի հավաքական նպատակների ծառայեցնելու փորձ, որը կարճ կյանք ունեցավ: Եվ արդեն հետստալինյան շրջանում կոմունիստական

3 **Պարեգին Եճեհ**, Ցեղի ոգու շարժը, «Չատընտիր», Եր., «Չայաստան», 2001, էջ 146:

տեսլականի մեջ ամփոփվող կեղծ նպատակներին նորից սկսեց փոխարինել օտար և թշնամական միջավայրերում հայի ինքնադրսևորման մինչպետական գործելակերպը՝ անհատական բարեկեցության ձգտումը: Այն հիմնավորում էր հայի համար օտար մարմինը՝ պետությունը, ցանկացած եղանակով իր անձնական նպատակներին ծառայեցնելու, իսկ եթե դա չի ստացվում, ապա «որտեղ հաց՝ այնտեղ կաց» սկզբունքով առաջնորդվելու գաղափարը: Արդյունքում՝ արդեն 1960-1980-ական թվականներին, դեռևս բարվոք վիճակում գտնվող Խորհրդային Հայաստանից սկիզբ առավ նորագույն շրջանի արտագաղթի առաջին ալիքը, որը հիմնականում ուղղվեց դեպի Միացյալ Նահանգներ ու նաև՝ Ռուսաստան, որտեղ հաստատված հայերի մոտ ձեռք բերեց բավականին սրամիտ հիմնավորում՝ «աշխարհին՝ խաղաղություն, հայերին՝ փող»:

Պետությունը հայի համար օտար ինստիտուտ լինելու մասին հին նախապաշարմունքը իր նոր քննությունը բռնեց Հայաստանի վերանկախացումից հետո: Նրանում հավասարապես դրսևորվեցին ինչպես «ազգի համար» կռվելու (Լարաբադյան պատերազմ), այնպես էլ պետական սեփականությունը «իր համար» օգտագործելու միտումները:

Սակայն պատերազմի ու սեփականաշնորհման ավարտից հետո արտաքին ու ներքին ճակատներում մարտնչելու փոխարեն՝ առաջ եկավ Հայաստանի **համակեցական տեսլականի** հստակեցման, այսինքն՝ պետությանը ներքին իմաստ հաղորդելու և այն հայրենիք դարձնելու առաջադրանքը, որի հիմքը հավասարակշռությունն է և՛ արտաքին աշխարհի հետ և՛ ներքին կյանքում<sup>4</sup>:

Մինչդեռ այն փխրուն արտաքին հավասարակշռությունը, որը Հայաստանը ձեռք բերեց 1990-ականների կեսերին՝ Ադրբեջանին ու Թուրքիային երկարատև խաղաղություն պարտադրած հայ-ռուսական պայմանագրերի միջոցով, դարձավ երկսայրի սուր, այսինքն՝ արտաքին ճակատում թշնամիներին զսպող, իսկ երկրի ներսում Հայաստանի համակեցական տեսլականի ձևավորմանը խանգարող գործոն: Այս գործոնին ոչ թե հակադրվեց, այլ փաստորեն գումարվեց Արևմուտքից սկիզբ առած արժեքային ներխուժումը, որը հիմնված էր Երկիր մոլորակը ողջ մարդկության «ընդհանուր տուն» դիտարկելու աշխարհայացքային մեկնակետի վրա: Հայրենիքի գաղափարը **սեփականի**, «միութենականի» և **համամոլորակայինի**, այսինքն՝ յուրահատուկ «երրորդության» տրոհելու հենքի վրա 1990-ականների կեսերից (1995-ի հուլիսի 5-ին սահմանադրության ընդունման, 1996-ի նախագահական ընտրությունների ժամանակներից) Հայաստանում սկսեց ձևավորվել մի եռատված համակարգ, որն իր հետ բերեց նաև սեփական «համակեցական տեսլականները» և դրանց կրողներին: Այդ ամենի հանրագումարը հիմնվեց այլոց հայրենիքներից բխող հիմնական արատների, մի կողմից՝ քաղաքական բռնության և կոռուպցիայի, մյուս կողմից՝ դրամի աստվածացման և ապազգայնացման երևույթների վրա: Նման ձևախեղված տեսլականը անցած տարիներին իրացրեց ընդամենը վարչակարգերի պահպանման գերխնդիրը: Դրա հետևանքով նորանկախ Հայաստանը վերածվեց **շրջված բուրգի**, որի զագաթը կազմելու առաքելությունն ունեցող հայ ժողովրդի կամքը հայտնվեց ամենամերձեքում՝ ստեղծելով գոյություն ունեցող իշխանությունից անհատի,

4 Ավելի մանրամասն տես **Ալբերտ Ա. Ստեփանյանի** Քաղաքակրթական հոմոնոստասիսը Մեծ Բայքում («Վեմ», 2009, N 3, 2010 N 1) հոդվածաշարի սկիզբը, որի շարունակությունը հրապարակվելու է մեր հանդեսի հաջորդ համարներում:

հասարակության և ազգի օտարման երևույթը:

Դրան գումարվեց ազատական բարեփոխումների քողի տակ Հայաստանում տեղի ունեցած մեծ խարդախության՝ խորհրդային բյուրոկրատիայի կողմից ազգային հարստության վերաբաշխում-վերաբաժանման օրինաչափ արդյունքը՝ փողապետության ձևավորումը, որը պետական իշխանության գործառնությունները նույնացրեց կոռուպցիայի հետ<sup>5</sup>: Այսպիսով՝ Հայաստանի երրորդ Հանրապետության քաղաքացի հայ անհատից քայլ առ քայլ խլվեցին քաղաքական իշխանության ձևավորման, տնտեսական գործունեության ազատության, անձի իրավական ապահովության հնարավորությունները:

Ավելին, դրան գումարվեց համաշխարհայինացման գործընթացի արդյունք՝ քաղաքակրթական ձգողականության օջախների հզոր ազդեցությունը, որոնք սկսեցին դեպի իրենց քաշել արարելու ձիրք ունեցող հայ անհատներին: Երկրում հաստատված մենաշնորհային համակարգի պայմաններում Հայաստանի վրա այս երևույթի ներգործությունը անհամեմատ ավելի ուժեղ է: Պատճառն այն է, որ մեզանում շարունակում են գործել բնակչության խտությունը վարելահողերի և գոյատևման համար անհրաժեշտ այլ պարզագույն միջոցների մեծությամբ պայմանավորող 19-20-րդ դարերի սահմանագծի մաթրոսյան օրինաչափությունները: Մինչդեռ արտաքին աշխարհն այսօր ապրում է 20-21-րդ դարերի սահմանագծի հետինդուստրիալ հասարակության չափորոշիչներով, որում բնակչության աճը պետության համար վտանգ է ներկայացնում միայն այն ժամանակ, երբ կանխում է հասարակության ներքին բազմազանեցումը: Իսկ երբ բնական պաշարները սպառելու փոխարեն մարդիկ զբաղվում են իրենց գործունեության ոլորտների տարբերակմամբ, «բնակչության աճը, բերելով նրա հետագա բազմազանեցմանը, կարող է պայմաններ ստեղծել ազգաբնակչության էլ ավելի մեծ աճի համար», ինչը «դրա հետ միասին կարող է ծառայել իբրև նախապայման՝ քաղաքակրթության ցանկացած առաջընթացի համար՝ ինչպես նյութական, այնպես էլ հոգևոր ոլորտում<sup>6</sup>»:

**Ստացվում է, որ մեր ներքին արատների ողջ հանրագումարը, գումարվելով արտաքին առարկայական գործընթացների ներգործությանը, բազմապատկող (նուկտիպիկատիվ) ազդեցություն են ունենում երկրից շարունակվող արտագաղթի վրա:** Որովհետև առկա դժգոհության հզոր էներգիան ուղղորդվում է ոչ թե դեպի ներս՝ Հայաստանի արդիականացման համար պայքարի հարթություն, այլ դեպի դուրս՝ արդեն իսկ արդիականացած միջավայրեր: Քանզի անոմիայի (anomie) հայկական տարատեսակը ևս գործում է հասարակության առանձին բջիջների մակարդակի վրա, որոնց ներսում «...միջանձային փոխհարաբերությունները չեն ենթարկվում որոշակի կարգաբերիչ ազդեցության<sup>7</sup>»:

Դա է պատճառը, որ երկրի տնտեսական իրավիճակի քանակական չափորոշիչների բարելավմանը զուգընթաց, կոռուպցիոն բնույթ ունեցող մենաշնորհները չեն սահմանափակվում, այլ ավելի են մեծանում՝ հիմնվելով իշխանական լծակների օգտագործմամբ տարածքային և ոլորտային արտոնությունների ձեռքբերման ու պաշտպանության վրա: Հայաստանի քաղաքական, տնտեսական և

5 Ավելի մանրամասն տես «Կեն»-ի ներկա համարում հրապարակվող՝ **Ատոմ Ե. Մարգարյանի** «Կոռուպցիան Հայաստանում» ուսումնասիրությունը:

6 **Хайек Ф.А.** Пагубная самонадеянность. Ошибки социализма. М. 1992 с. 210.

7 **Durkheim E.** The Division of Labor in Society. N. Y. 1933. p. 15.

անգամ հոգևոր-մշակութային ոլորտներում ամեն ինչ բաժանված լինելու մասին համոզմունքը առաջ է բերում օտարման երևույթը<sup>8</sup>, քանզի հայ մարդը սկսում է մտածել, որ իր երկրում ինքը զրկված է կայանալու և իր երեխաների ապագան կերտելու հնարավորությունից:

**Հաճախ մեզանում առկա արևելյան-ավանդական հասարակությանը բնորոշ այս արատները բնութագրող ուսումնասիրողները դրանք սխալմամբ կապում են հայկական մշակույթի առանձնահատկությունների հետ: Մինչդեռ, իրականում այս երևույթները խորապես օտար են մեր մշակույթի էությանը, հայկական քաղաքակրթության քրիստոնեական բովանդակությանը:** Քրիստոնեությունը հայ մարդուն դարեր շարունակ սովորեցրել է միմյանց սիրելու, ժուժկալության, հավաքական նպատակների և «սուրբ գործի» համար նահատակության բարոյաէթիկական նորմերը: Դրանք հետագայում դարձել են ողջ արևմտյան քաղաքակրթության հիմնաքարերը, սակայն մեզանում, դժբախտաբար, սկսել են կորսվել մահմեդական տիրապետության շրջանում:

Նման երևույթի ներկա դրսևորումները վկայում են, որ անկախ Հայաստանում հայ մարդը փաստորեն վերադարձել է արևելյան բռնապետությունների հանդեպ իր ավանդական հարմարվողականությանը՝ մոռանալով, որ նոր ժամանակներում ինքը հասցրել է մկրտվել եվրոպական քաղաքակրթության հիմնարար արժեքների նոր կերպավորումը դարձած **լուսավորականության** ավագանում: Հենց այդ ավագանում է ծնվել Միքայել Նալբանդյանի կողմից սկզբնավորված հայոց ազատության փիլիսոփայությունը՝ հայ ազատամարտի ու անկախ պետականության վերականգնման գաղափարախոսությունը<sup>9</sup>:

Այսպիսով՝ Հայաստանի երրորդ Հանրապետությունում արձանագրվել է հայկական քաղաքակրթության հիմնարար արժեքների էական նահանջ և դրանից բխող՝ **«ըմբոստ հայերի»** թվաքանակի կտրուկ նվազում: Այս իրողությանը գումարվել է անհատի արժեքային ընտրության առաջադրանքը, քանզի պարզ-նյութական պահանջումների փոխարեն ժամանակակից աշխարհում աստիճանաբար մարդկային գործունեության հիմնական շարժառիթն է դառնում ճանաչման հասնելու ձգտումը<sup>10</sup>: Նման ձգտումը բախվելով վստահության խիստ ցածր մակարդակ ունեցող հայաստանյան հասարակության անտարբերությանը, հայ անհատի տատանվող հայացքն ուղղում է դեպի այն միջավայրերը, ուր մարդիկ կարող են բավարարել ոչ միայն իրենց առօրեական պահանջումները, այլև ձեռք բերել հպարտություն սեփական գործի, գյուտի, ստեղծագործության համար:

Ախտաճանաչումների այս երկար շղթայից բխում է մեր հիմնական ախտորոշումը՝ Հայաստանի Հանրապետությունից արտագաղթելու միջոցով հայ անհատների մի մասը փորձում է հեռանալ **Ֆիզիկական Հայաստանից**՝ անհիմն

8 Անկախ Հայաստանում հայ մարդու օտարման փաստի գիտական քննությանն է նվիրված «Վեմ»-ի ներկա համարում հրապարակվող **Մանուկ Ա. Հարությունյանի** ուսումնասիրությունը:  
9 Ավելի մանրամասն տես **Արամ Գ. Ալեքսանյանի** «Միքայել Նալբանդյան. ազատության փիլիսոփայությունը» հրապարակումը:  
10 Արդի աշխարհում մարդկային գործունեության շարժառիթների մեջ արձանագրվող ակնհայտ տեղաշարժը՝ պարզ-նյութականի ոլորտից դեպի արժեքային-մշակութային հիմք ունեցող բարոյա-հոգեբանական նորմերը, նախ և առաջ **ճանաչման** հասնելու ձգտումը 1990-ականների կեսերին փայլուն կերպով հիմնավորվել է **Ֆ. Ֆուկույամայի** «Trust. The Social Virtues and the Creation of Prosperity. N.Y. Free Press 1996» հիմնարար աշխատության մեջ: **Ֆ. Ֆուկույամայի** կողմից առաջադրված «Trust»-ի (վստահության) գաղափար-սկզբունքը փորձառու վիրաբույժի այն նշտարն է, որը կտրում-բացում է մեզանում արձանագրվող օտարման պատճառները:

կերպով հուսալով, որ օտար ափերում կգտնի հայկական քաղաքակրթությանը բնորոշ արժեքների համակարգը՝ **հոգևոր Հայաստանը**, որն իր հարազատ հողի վրա ներկայումս վերածվել է դատարկ ձևի՝ թանգարանային նմուշի կամ ազգագրական պարի: Մյուս մասն ընդհակառակը՝ արտագաղթում է ընդմիջա, քանի որ նա օտարվել է ոչ միայն ֆիզիկական, այլև հոգևոր Հայաստանից:

Խոստովանենք, որ ֆիզիկական ու հոգևոր Հայաստանների միջև առկա աղաղակող հակասությունը մեզանում անհերքելի իրողություն է: Բայց մյուս կողմից էլ անկհայտ է, որ հարցի նման դրվածքը սկզբունքային առումով տեսաբանական և աշխարհայացքային նոստենս է, իսկ գործնական գետնի վրա՝ պարզ ինքնախաբեություն: Նոստենս է այն պարզ պատճառով, որ որոշակի միջավայրի պտուղ հոգևոր Հայաստանը կարող է ծլարձակել և աճել միայն հարազատ հողի վրա: Ուստի երբ իր փոքրիկ հողակտորի «անապատացման» փաստն արձանագող ազգի կենսունակ մասը ցանկություն է հայտնում լքել սեփական հայրենիքը, Հայաստանը մնում է մենաշնորհներ ունեցող կեղծ-ուժեղներին և դրանցից գուրկ անհուսալի թույլերին: Արդյունքում՝ **ազգն իբրև շարժուն (ու ոգեղինացած) հայրենիք**, ներքնապես խորթանում է **անշարժ (ու նյութականացած) հայրենիքի**<sup>11</sup>: Եվ ինչպես հոգեվարքի պահին, հայոց էությունը սկսում է տարանջատվել ձևից՝ հուսալով գտնել իր գոյության նոր խարիսխները:

Մինչդեռ, եթե միջնադարում, երբ մեր հայրենիքը զավթված էր օտարների կողմից, նման տարանջատումը երբեմն նպաստում էր հոգևոր Հայաստանի վերելքին՝ հայկական գաղթօջախներում, ներկայումս՝ համաշխարհայնացման պայմաններում, այն ճիշտ հակառակ արդյունքն է խոստանում: Այժմ սկսել է գործել յուրաքանչյուր ազգային **նավի** բարեհաջող նավարկության համար պարտադիր՝ **նավահանգիստ** ունենալու հրամայական պահանջը, առանց որի համաշխարհային հարթակներում ինքնադրսևորվելու՝ հոգևոր Հայաստանի փորձերը դատապարտված են ձախողման: Քանզի համաշխարհայնացման արդյունք՝ ինքնադրսևորման հնարավորությունների բազմապատկումը հանգեցնում է նաև օտար ազդեցությունների բազմապատկմանը, ինչը ստեղծում է ինքնության կորստի սպառնալիք:

Ուստի, «ո՞վ է մեղավոր Հայաստանում ստեղծված վիճակի համար» հարցի պատասխանը կոնկրետ միջավայրից դուրս փնտրելու փորձերը այն նոր «ամբոխային տրամաբանությունն» են, որն իբրև պարզ ինքնախաբեություն, հաճախ վերածվում է արտագաղթի խթանման լրացուցիչ ազդակի: Իսկ դա նշանակում է, որ Հայաստանից արտագաղթի պատճառ դարձող երկու հիմնական հոգեբանական իրավիճակների ստեղծման մեջ մեղավոր են ոչ միայն նրանք, ովքեր մեր երկրում ձևավորել են հայկական քաղաքակրթության արժեքներին հակասող արատավոր համակարգ, այլև նրանք, ովքեր իրենց համակերպվող կեցվածքներով ու արտագաղթով օբյեկտիվորեն նպաստում են այդ ամենին:

Վերջերս Հայաստանում անցկացված հետազոտությունների համաձայն՝ մեր հասարակության մեծամասնությունը նախընտրում է լռել, չրոդոքել անարդարությունների դեմ, կամ էլ քննադատելով հանդերձ, վերջում համակերպվել ու «ծախվել»: Սեփական հայրենիքում օտարված հայի այս ինքնամփոփ, լուռ մեծամասնությունն է իրականում Հայաստանը մաշող արտագաղթի հիմնական սնուցիչը:

11 Տե՛ս **Վահան Նաասարդեան**, Գ.Յ.Դ. Գաղափարաբանությունը, «Յուշապատում Գ. Յ. Դաշնակցութեան. 1890-1950, Բոստոն, «Հայրենիք»-ի տպարան, 1950, էջ 203:

Նրա համար օտար են և՛ առկա համակարգը, և՛ վերջին երկու տասնամյակներում իբրև դրա հակաթեզ առաջարկվող՝ ժողովրդավարության արտաքին կադապարները կամ «ստանդարտները»: Ուստի նման կերպ մտածողներից շատերը փախչելով՝ ազատում են իրենց ավելորդ գլխացավանքից՝ հավաստիացնելով, որ երբ Հայաստանում իրավիճակը կշտկվի, իրենք հետ կվերադառնան: Իսկ ո՞վ է շտկելու իրավիճակը՝ դա չի հետաքրքրում այս նոր «ամբոխային տրամաբանության» հետևորդներին, որոնք իրենց կամքից անկախ դառնում են Հայաստանում ձևավորված արատավոր համակարգի անասանության և նրա հեղինարանը հանդիսացող հնագանդ մեծամասնության **համակերպվողական** վարքագծի **գաղափարախոսները**:

**Եզրակացությունը պարզ է.**

Երբ պնդում ենք, որ երկրի տնտեսաքաղաքական իրավիճակն անտանելի է և հայրենի հողի վրա հայը գրկված է ազատորեն ինքնադրսևորվելու հնարավորությունից, մոռանում ենք, որ դրա համար մեղավոր են նաև գրկվածներն ու անարգվողները, ովքեր իրենց իրավունքների համար պայքարելու փոխարեն լուռ համակերպվում են, կամ՝ հեռանում: Մեղավոր ենք նաև մենք՝ ինքներս, որպես հավաքականություն՝ ազգ, հասարակություն, կուսակցություններ, կազմակերպություններ: Եվ ամենակարևորը՝ եթե մեզանից յուրաքանչյուրը առաջնորդվի այն գիտակցությամբ, որ անհատապես հենց ի՛նքն է մեղավոր ստեղծված իրավիճակի համար համոզված ենք, ապա կացությունն անպայման կբարելավվի:

Հակառակ տրամաբանությունը նման է մարտի դաշտը լքելու, դասալքության արդարացմանը՝ հայրենիքի գավթիչների ավելի հզոր լինելու «փաստարկի» միջոցով: Եթե այդպես մտածեինք սրանից մոտ մեկ հարյուրամյակ առաջ և հայ հեղափոխությունը սկսելու փոխարեն հոգևոր Հայաստանը փնտրեինք օտար ավերում, ապա այսօր չէինք ունենա նահատակ հերոսների արյան գնով ձեռք բերված սեփական հողի վրա գոյատևելու հնարավորություն՝ անկախ Հայաստան: Այսինքն, փաստորեն, ոչինչ էլ չէինք ունենա, քանզի առանց ֆիզիկական Հայաստանի վաղ թե ուշ կկորցնեինք նաև հոգևոր Հայաստանը: Ուրեմն՝ ոչ որ իր «լավ հայրենիքը» չի փոխանակի մեր «վատ հայրենիքի» հետ և այսօր ունենք այն, ինչին արժանի ենք այս պահին: Եվ եթե, իրավացիորեն պնդում ենք, որ սկզբունքորեն արժանի չենք նման երկիր ունենալու ճակատագրին, ապա պետք է ոչ թե հեռանանք և ինքնաարդարացումներ փնտրենք, այլ յուրաքանչյուրս մեր տեղում խոստովանենք՝ **մեղավորը ես եմ**: Քանի դեռ բացակայում է մեղքի սեփական բաժնի հստակ գիտակցումը, ստեղծված կացության համար ուրիշներին մեղադրելը մեծագույն սխալ է: Անհատական և հավաքական պարտքի ու պատասխանատվության **խրամատներից** միայն կարելի է քննադատել այլոց վարքագիծը:

Ուստի ինչպես հայ հեղափոխության արշալույսին, այսօր էլ մեր գոյության հիմնասյուների տարանջատման վտանգը վանելու համար զգացվում է սեփական հողի վրա օտարված հայ հանրույթին իր հիմնարար արժեքների համար պայքարի առաջնորդող գաղափարակիրների՝ **լուսավորիչների** ու **հեղափոխականների** կարիքը: Քանզի Հայոց պետականության ներքին ազատությունը վե-

րանվաճելու համար անհրաժեշտ առարկայական պայմանները մեզանում արդեն հասունացել են: Բացակայում է ենթակայական գործոնն իբրև ազգի ինտելեկտուալ և գաղափարական փոքրամասնության միահամուռ կամք և բարոյական դատավճիռ: Մինչդեռ Հայաստանը նախևառաջ բարոյականություն է, քրիստոնեական բարոյականություն, որը պարբերաբար ծառս է լինում իրեն շրջապատող միջավայրի կողմից պարտադրվող **ասիականության** դեմ:

Ուրեմն լուռ մեծամասնության պասիվ բողոքն «ակտիվացնելու», մնալու և պայքարելու համար հոգևոր Հայաստանին սկզբում անհրաժեշտ է ոչ թե իշխանության, կամ «օլիգարխների», այլ հենց սեփական մեղքի գիտակցումը: Լույսի մման խավարը ճեղքող նման գիտակցությունից ծնունդ է առնելու Հայոց պետականության ապագայի հայկական ընկալումը՝ հիմնված **քրիստոնեական բարոյականության**, դրանից բխող՝ **ազատության փիլիսոփայության**, հայի **անհատականության** զարգացմանը խոչընդոտող արգելքների վերացման, տնտեսական գործունեության ոլորտների **բազմազանեցման**, դրանից բխող՝ **մասնակցային ժողովրդավարության** և **քաղաքակրթական ձևերի** մեջ կերպավորվող հայկական էլիտար մշակույթի վրա: Ազգի ընդարմացած ոգին արթնացնելով, նրան բանականորեն ընկալելի համակեցական տեսլականով օժտելով ներկա պահին հարկ է լուծել ընդամենը մեկ խնդիր՝ արտագաղթի պատճառ դարձող հեղձուցիչ մթնոլորտի փոփոխության առաջադրանքը:

Հաշվի առնելով այն իրողությունը, որ ժողովրդագրական համադեպի առջև կանգնած Հայաստանի քաղաքական վերնախավի կողմից ներկայումս ձեռնարկվող քայլերը չեն հիմնվում շարունակվող արտագաղթի պատճառների և դրանցից բխող՝ համակարգված ժողովրդագրական քաղաքականության վրա, իսկ մեր հասարակությունը զգում է ստեղծված աղետալի իրավիճակի լուրջ վերլուծականների կարիքը, «Վէմ» համահայկական հանդեսը ընթերցողին է առաջարկում իր գիտական գնահատականները: Շարունակելով Հայոց ցեղասպանության 95-ամյակի հետ կապված նյութերի հրապարակումը, և մասնակիորեն սահմանափակելով պարբերական բնույթ ունեցող մի շարք ուսումնասիրությունների տպագրությունը, հանդեսի ներկա համարի առանցքն ենք դարձրել Հայաստանի ժողովրդագրական իրավիճակի, երկրում իրականացվող միգրացիոն քաղաքականության և ահագնացող արտագաղթի քննությանը նվիրված գիտական հոդվածները:

## Editorial

## DISJOINING BASES